ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Բիոլոգիական գիտ. XV, № 9, 1962 Биологические науки

Գ. Խ. ԱՂԱՋԱՆՅԱՆ (ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Լրացավ Հայաստանի գյուղատնտեսության անխոնջ ու մեծավաստակ սերմնացաններից մեկի՝ գիտության վաստակավոր գործիչ Գեղամ Խաչատուրի Աղաջանյանի ծննդյան 70-ամյակը։

Մեզ մոտ՝ Սովետական Հայաստանում, դժվար է գտնել մի գյուղ, կոլտնտեսություն, սովխոզ, վերջապես մի հայ սերմնացան, որին անծանոթ լինի Գեղամ Խաչատուրի Աղաջանյանը և որը հմայված չլինի նրա դասախոսություններով, զրույցներով, խորհուրդներով։

Մեր ռեսպուբլիկայի գյուղատնտեսության ասպարեզում բոլոր աշխատողները ճանաչում են անվանի գիտնականին։ Նա իր ամբողջ կյանքը նվիրել է հայրենի երկրի գյուղատնտեսության զարգացման, նրա դաշտերի բերքատվության բարձրացման և երիտասարդ մասնագիտական կադրեր պատրաստելու պատվավոր գործին։

Գ. Խ. Աղաջանյանը ծնվել է 1891 թվականին, Սուրմալուի գավառի Բլուր գյուղում։ Սկզբնական կրթությունը նա ստացել է Կրզլ Զաքիրի երկդասյան դպրոցում, ապա սովորել ու ավարտել է Իգդիրի քաղաքային դպրոցը։ Որոշ ժամանակից հետո Գ. Խ. Աղաջանյանը գալիս է Երևան և ընդունվում Երևանի ուսուցչական սեմինարիան։

1913 թվականին ուսուցչական սեմինարիան ավարտելուց հետո Գ. Խ. Աղաջանյանը իրեն նվիրում է երեխաների դաստիարակման կարևոր գործին։ Նա նշանակվում է Նախիջևանի գավառի Կուլիբեկդիզա գյուղի երկդասյան դպրոցի ուսուցիչ, իսկ մեկ տարուց հետո փոխադրվում է Գնդեվազի մեկդասյան դպրոցը իբրև տեսուչ։

Այնուհետև Գ. Խ. Աղաջանյանը մանկավարժական աշխատանքի է անցնում ծխական դպրոցներում, որտեղ դասավանդում է մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը։

Սովետական իշխանության առաջին շրջանում, 1921 թվականին, Գ. Խ. Աղաջանյանը նշանակվում է Երևան քաղաքի ու գավառի դպրոցների հրահանգիչ, ապա գործուղվում է Դիլիջանում կազմակերպված մանկավարժական դասընթացները։ Այս դասընթացներն ավարտելուց հետո նա նշանակվում է Երևանի ռուսական միջնակարգ դպրոցի դասատու և միաժամանակ կատարում մանկավարժական թանգարանի լաբորանտի պարտականությունները։

1922 թվականին Գ. Խ. Ադաջանյանն ընդունվում է Երևանի անդրանիկ բարձրագույն դպրոցի՝ Պետական Համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը։ Համալսարանի ուսանող եղած ժամանակ նա չի թողնում մանկավարժական աշխատանքը, շարունակում է դասավանդել Երևանի 13-րդ յոթնամյա դպրոցում։

1926 թվականին Գ. Խ. Ադաջանյանը ավարտում է Պետական Համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը և ստանում ագրոնոմի կոչում։

Դեռ Համալսարանի վերջին կուրսի ուսանող եղած ժամանակ նա նշանակվում է Բուսաբանության ամբիոնի լաբորանտ, իսկ Համալսարանն ավարտելուց հետո մշտական աշխատանքի է անցնում մասնավոր երկրագործության ամբիոնում, որն այն ժամանակ գլխավորում էր պրոֆ. Մ. Գ. Թումանյանը։

Գ. Խ. Ադաջանյանը 1928 թվականին նշանակվում է նույն ամբիոնի ասիստենտ և այստեղից էլ սկսվում է նրա բեղմնավոր մանկավարժական աշխատանքը բարձրագույն դպրոցում, որը շարունակվում է մինչև օրս։

Միաժամանակ, 1928 թվականից մինչև 1930 թվականը, համատեղության կարգով աշխատել է Պետական Համալսարանի ուսումնական տնտեսությունում (ՁԱԳ) վարիչի պաշտոնով, որտեղ նա կարճ ժամանակաընթացքում բարձրացրել է տնտեսությունը և օրինակելի կերպով կազմակերպել Համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի ուսանողության-ուսումնական ու արտադրական պրակտիկան։

1930 թվականին Երևանի Պետական Համալսարանից անջատվում է գյուղատնտեսական ֆակուլտետը և նրա բազայի վրա կազմակերպվում Գյուղատնտեսական ինստիտուտ։ Այս կապակցությամբ Գ. Խ. Ադաջանյանը փոխադրվում է նոր ստեղծված ինստիտուտը, որտեղ նշանակվում է Ընդհանուր երկրագործության ամբիոնի վարիչ։ Եվ ահա Գյուղատնտեսական ինստիտուտի այդ ամբիոնը նա հաջողությամբ ղեկավարում է մինչև այսօր։

1937 թվականին կատարած ու հրատարակած աշխատանքների հիման վրա, առանց դիսերտացիայի պաշտպանության, Համամիութենական Ատեստացիոն Հանձնաժողովի կողմից Գ. Խ. Ադաջանյանին շնորհվել է գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և պրոֆեսորի պաշտոնակատարի կոչում։

Գ. Խ. Ադաջանյանը 1939 թվականին Մոսկվայի Տիմիրյազևի անվան Գյուղատնտեսական ակադեմիայի գիտական խորհրդում պաշտպանում է դոկտորական դիսերտացիա և արժանանում գյուղատնտեսական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի ու պրոֆեսորի կոչման։ 1953 թվականին նա ընտրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1956 թվականին՝ իսկական անդամ։

Երեսունհինգ բեղմնավոր տարիների ընթացքում նվիրված ու բարեխիղճ աշխատանքի շնորհիվ նա անգնահատելի գործ է կատարել Հայաստանի գյուղատնտեսության համար՝ բարձրորակ ագրոնոմիական կադրեր պատրաստելու առաջադրանքում։

Հայաստանի բոլոր շրջաններում, կոլտնտեսություններում ու սովխոզներում, բազմաթիվ գիտահետազոտական գյուղատնտեսական օրգաններում աշխատող համարյա բոլոր ագրոնոմները, ռևսպուբլիկայի բազմաթիվ գիտահետազոտական հիմնարկների ու փորձակայանների գիտական աշխատողների մեծ մասը, ինչպես նաև գյուղատնտեսական բնագավառում աշխատող ղեկա-

վար կադրերի զգալի մասը պրոֆեսոր Գ. Խ. Աղաջանյանի նախկին սաներն են։ Նրանք բոլորն էլ իր ժամանակին լսել են Գ. Խ. Աղաջանյանի կյանքի ու արտադրության հետ սերտորեն կապված բովանդակալից դասախոսությունները, իսկ նրանցից շատերը մինչ օրս էլ սերտ կապ են պահպանում գիտնականի հետ և լայնորեն օգտվում նրա խորհուրդներից։ Բացի Գյուղատնտեսական ինստիտուտից, Գ. Խ. Աղաջանյանը տարիների ընթացքում դասախոսություններ է կարդացել Կոմունիստական գյուղատնտեսական բարձրագույն դպրոցում, Մանկավարժական ինստիտուտում, Պարտիական դպրոցում և այլ ուսումնական հաստատություններում։

Նա շուրջ 10 տարի (1941—1951 թթ.) եղել է Գյուղատնտեսական ինստիտուտի դիրեկտորի տեղակալ ուսումնական ու գիտական գծով և ոչ մի ջանք չի խնայել ինստիտուտի առջև դրված ուսումնական ու գիտական խնդիրներն անթերի կերպով կատարելու համար։

Գ. Խ. Աղաջանյանը մշտական կոնսուլտանտ է եղել մեր գիտահետազոտական հիմնարկների, գյուղատնտեսական բուհերի ու տեխնիկումների երիտասարդ կադրերի համար և սիստեմատիկ կերպով նպաստել է նրանց գիտական մակարդակը բարձրացնելու գործին։

Գ. Խ. Աղաջանյանը աճեցրել ու դաստիարակել է երիտասարդ գիտական կադրեր։ Նրա ղեկավարությամբ ընդհանուր երկրագործության գծով դիսերտացիաներ են պաշտպանել և գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի աստիճանի արժանացել 25-ից ավելի երիտասարդներ, որոնք այսօր հաջողությամբ աշխատում են ռեսպուբլիկայի տարբեր գիտական ու մանկավարժական հիմնարկներում։ Առանձնապես ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ մի շարք երիտասարդ մասնագետներ գիտական աշխատանք են կատարել, դիսերտացիա պաշտպանել և գիտական աստիճան ստանալով՝ բարձրացրել են իրենց որակը առանց գյուղատնտեսական արտադրությունից կտրվելու։

Պրոֆ. Գ. Խ. Աղաջանյանը սերտորեն կապված է ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների ու սովխոզների հետ, որոնց նա սիստեմատիկ օգնություն է ցույց տալիս։

Հանդիսանալով ականավոր գիտնական և Հայաստանի գյուղատնտեսության լավագույն գիտակ, նա չափազանց մեծ աշխատանք է ծավալում գյուղատնտեսական գիտության նվաճումները և սոցիալիստական դաշտերի բարձր բերքի վարպետների առաջավոր փորձը մասսայականացնելու ասպարեզում։ Այդ նպատակով նա գրել է շուրջ 80 գիտա-մասսայական բրոշյուրներ և թերթերում հրապարակել 300-ից ավելի հոդվածներ։ Տարիների ընթացքում նա օգնել և օգնում է ՀՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրության համապատասխան վարչություններին՝ ագրոտեխնիկական հարցերի մշակման գործում։

Գ. Խ. Աղաջանյանը բոլորին հայտնի է որպես ակտիվ ու գործունյա հասարակական գործիչ։ Լուսավորության աշխատողների պրոֆմիության գծով նա երկար ժամանակ եղել է գիտական աշխատողների սեկցիայի պատասխանատու քարտուղար, ապա և նախագահ։ Իր ակտիվ հասարակական աշխատանքի համար Գ. Խ. Աղաջանյանը քանիցս պարգևատրվել է հարվածայինի կոչումով, պատվոգրերով։ Նա ղեկավարում է Հայկական ՍՍՌ Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերության գյուղատնտեսական սեկցիայի աշխատանքները և ընկերության վարչության նախագահության անդամ է։ Նրա

կազմակերպման առաջին օրվանից։ Մի քանի անգամ նա ընտրվել է Շրջսովետի, Երևանի Քաղսովետի ու օկրուգային սովետի դեպուտատ և բարեխիղճ կերպով կատարել իր վրա դրված պարտականությունները։ Լինելով մի շարք ինստիտուտների ու գիտահետազոտական հիմնարկների գիտական խորհուրդների, հանդեսների խմբագրական կոլեգիաների անդամ, նա իր ակտիվ մասնակցությամբ նպաստել է նրանց աշխատանքներին։

Բացի Գյուղատնտեսական ինստիտուտից, Գ. Խ. Ադաջանյանը տարբեր ժամանակներում աշխատել է Արմֆանում, Գիտությունների ակադեմիայի Երկրագործության գիտահետազոտական ինստիտուտում, Կերհայթայթման ինստիտուտում և այլն, իսկ 1955—56 թվականներին վարել է Գիտությունների ակադեմիայի գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնակատարի պաշտոնը։ Այդ ժամանակ, վերակառուցման կապակցությամբ, գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի հիմնարկները հանձնվեցին Գյուղատնտեսության մինիստրությանը և նա 1956 թվականից մինչև 1962 թ. ապրիլ ամիսը աշխատել է Գյուղատնտեսության մինիստրությունում որպես գիտության գլխավոր վարչության պետ։

Դեռևս 1928 թվականին Գ. Խ. Ադաջանյանը ակտիվ մասնակցություն է ունեցել Մ. Գ. Թումանյանի գեկավարությամբ Հայաստանի դաշտավարությունն ուսումնասիրող էքսպեդիցիայի աշխատանքներին, որպես էքսպեդիցիայի գեկավարի տեղակալ։ Այնուհետև, իր բազմամյա գործունեության ընթացքում Գ. Խ. Ադաջանյանը գեկավարել է մի շարք այլ էքսպեդիցիաների աշխատանքները՝ նվիրված Հայաստանի դաշտավարության և ընդհանրապես գյուղատնտեսական տարբեր հարցերի ուսումնասիրությանը։

Որպես գյուղատնտեսության առաջավոր, նա մի քանի տարի եղել է Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի մասնակից և պարգևատրվել է Ոսկե մեծ մեդալով։

Գյուղատնտեսության ասպարեզում Գ. Խ. Ադաջանյանը, որպես ականավոր գիտնական, ագրոնոմիական գիտություն հարստացրել է բազմաթիվ արժեքավոր հետազոտություններով։ Նրա աշխատանքների մի զգալի մասը հիմք է ծառայել գյուղատնտեսության գործնական միջոցառումները մշակելու գործում։ Այսպես, օրինակ՝ մոլասորգոյի բիոլոգիայի և պայքարի միջոցառումների նրա ուսումնասիրությունները, որոնց նա նվիրել է իր գիտական գործունեության մի ամբողջ շրջան, մեծ չափով նպաստել են բարձրացնելու մի շարք կուլտուրաների բերքատվությունը։ Հայաստանի լեռնային պայմաններում հացահատիկային կուլտուրաների նկատմամբ նրա կատարած հետազոտությունները մեծ նշանակություն են ունեցել լեռնային շրջանների գյուղատնտեսության զարգացման գործում։

Պրոֆեսոր Գ. Խ. Ադաջանյանը գրել ու հրատարակել է շուրջ 90 գիտական աշխատություններ, ընդհանուր երկրագործության դասագիրք ու ձեռնարկներ, որոնց վրա երկար տարիներ դաստիարակվել ու աճել են հանրապետիկայի երիտասարդ գյուղատնտեսական կադրերը։

Ամենից առաջ ուշադրության արժանի է մոլասորգոյի բիոլոգիական հատկություններին ու նրա դեմ պայքարելու միջոցառումների մշակմանը նվիրված նրա մեծածավալ աշխատությունը, որը հրատարակվել է 1940 թվականին։ Հայտնի է, որ մոլասորգոն մեր հանրապետիկայի բամբակացան շրջաններին հսկայական վնասներ է պատճառում։ Գ. Խ. Ադաջանյանի այդ ուսումնասիրու-

թյան հիման վրա մշակվել է մոլասորգոյի դեմ պայքարելու միջոցառումների մի ամբողջ կոմպլեքս։ Բացի այդ, նա ուսումնասիրել է խրփուկի, կարանտին ու մի շարք այլ մոլախոտերի բիոլոգիական առանձնահատկությունները, նրանց տարածման սահմանները և դրանց հիման վրա առաջարկել պայքարի կոնկրետ միջոցառումներ։

Մոլախոտերի ուսումնասիրությանը նվիրված աշխատություններից անհրաժեշտ է հիշատակել վերջին շրջանում լույս տեսած «Հայաստանի մոլախոտային բուսականությունն ու պայքարը նրա դեմ» մենագրության առաջին հատորը, որտեղ ամփոփվում են հեղինակի երկար տարիների դիտողություններն ու հավաքական նյութերը։

Տարիների ընթացքում Գ. Խ. Աղաջանյանն ուսումնասիրելով Հայաստանում մշակվող հացահատիկային կուլտուրաների, շաքարի ճակնդեղի, կարտոֆիլի, բամբակենու և այլ կուլտուրաների ագրոտեխնիկան, առաջարկել է նրանց մշակության վերաբերյալ անհրաժեշտ միջոցառումներ, որոնցից շատերը համապատասխան տեղ են գտել առանձին կուլտուրաների մշակման ագրոձեռնարկումների մեջ։

Ուշադրության արժանի են նաև Գ. Խ. Աղաջանյանի «Դաշտային կուլտուրաներն ու նրանց ագրոտեխնիկան» եռահատոր մեծածավալ աշխատությունը (պրոֆ. Ա. Ա. Մատթևոսյանի ու դոցենտ Մ. Ա. Գյուլխասյանի մասնակցությամբ), որը գրված է, հիմնականում, արտադրության մեջ աշխատողների՝ ագրոնոմների, դաշտավարական բրիգադների բրիգադիրների, կոլտնտեսությունների վարչությունների նախագահների համար։ Այստեղ մանրամասն նկարագրվում են հացահատիկային կուլտուրաները, հատիկային ընդեղենները, ձիթատու և թելատու բույսերը, կերի խոտաբույսերը, արմատապալարապտուղները և նրանց մշակման առանձնահատկությունները։

Գ. Խ. Աղաջանյանի մի շարք աշխատությունները նվիրված են հողի ֆիզիկական հատկանիշների լավացման և նրա էֆեկտիվ բերրիության բարձրացման հարցերին, որոնք կարևոր դեր են կատարել ռեսպուբլիկայում այդ ուղղությամբ կատարվող գիտահետազոտական աշխատանքների ընթացքի ճշտման կապակցությամբ։

Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն նաև Գ. Խ. Աղաջանյանի այն աշխատությունները, որոնք նվիրված են Հայաստանի աղակալած և ճահճացած հողերի յուրացման հարցերին։

Պրոֆ. Գ. Խ. Աղաջանյանը աչքի է ընկնում նաև իր չափազանց աշխատասիրությամբ, աշխատանքային կազմակերպվածությամբ ու կարգապահությամբ, համեստությամբ, ինչպես նաև բոլորին օգնելու պատրաստակամությամբ։ Այդ պատճառով նրան հավասարապես հարգում են և՛ ուսանողները, և՛ աշխատակիցները, և՛ ընկերները, և՛ կոլտնտեսականները։

Այժմ, ՍՄԿՊ XXII համագումարի և Կենտկոմի 1962 թ. Մարտյան պլենումի որոշումների լույսի տակ Գ. Խ. Աղաջանյանն է՛լ ավելի ակտիվորեն կպայքարի երկրագործության ավելի պրոգրեսիվ գիտական հիմունքներ մշակելու և սոցիալիստական դաշտերում դրանք գործնականորեն կիրառելու ուղղությամբ։

Գ. Խ. Աղաջանյանը հանդիսանում է ռեսպուբլիկայի մանկավարժական, գիտական, հասարակական ակտիվ գործիչներից մեկը։

Նկատի ունենալով Գ. Խ. Աղաջանյանի աշխատանքի մեծ ծավալը, գիտական աշխատությունների արտադրական արժեքը և բարձր որակը, նրա ակտիվ

գործունեությունը գիտության նվաճումների ու առաջավոր փորձի պրոպագանդման ասպարեզում, նրա մեծ ծառայությունները երկրի գյուղատնտեսության համար բարձրորակ կադրեր պատրաստելու գործում, Սովետական կառավարությունը նրան պարգևատրել է Լենինի, երկու «Պատվո նշան» շքանշաններով ու մեդալներով և նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

Գ. Խ. Ադաջանյանը դեռ լի է ստեղծագործական ընդունակություններով, նրա էներգիան ու ակտիվությունը դեռ անսպառ են, նա դեռ լի է պատրաստակամությամբ ծառայելու և ակտիվ կերպով նպաստելու մեր գյուղի և հայրենի երկրի գյուղատնտեսության հետագա բարգավաճման, նոր երիտասարդ կադրեր աճեցնելու և դաստիարակելու մեծ ու պատվավոր գործին։

Նա դեռ ի վիճակի է երկրին տալու գիտական լուրջ աշխատություններ և հարստացնելու գյուղատնտեսական գրականությունը նոր գործերով։

Ողջունելով Գ. Խ. Ադաջանյանի ծննդյան 70-ամյակը և նրա մանկավարժական-գիտական ու հասարակական եռանդուն գործունեության 50-ամյակը, ցանկանում ենք նրան բաջառողջություն, որպեսզի նա դեռ երկար տարիներ բոլորիս հետ միասին աշխատի ու պայքարի մեր երկրում պատմության մեջ ամենաարդարացի սոցիալական իրավակարգ՝ կոմունիստական հասարակարգ ստեղծելու համար։